13370

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«03» 11 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0210-21

Ձեռնարկողը՝ ***«Դիազափայլ» ՍՊԸ***
ք. Երևան, Աբովյան 22 Ա, բն. 45

Գործունեությունը՝ ***Արագածոտնի մարզի, Թալին համայնքի վարչական տարածքում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Գայի փողոց 85 հողամաս

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի՝ պարտականությունները կատարող Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 10 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
թիվ ԲՓ 0210-21
«03» 11 2021թ.

Արագածոտնի մարզի Թալին համայնքի վարչական տարածքում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Դիզափայտ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ հաշվետվություն
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ՀՀ, Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Գայի փողոց 85 հողամաս

Ներածական մաս. «Դիզափայտ» ՍՊ ընկերությունը նախատեսում է ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքում իրականացնել արևային կայանի նախագծման, կառուցման և շահագործման աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 5-րդ մասի, 3)-րդ կետի, գ) ենթակետի ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների է, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի:

Հողամասի ընդհանուր մակերեսը համաձայն ընկերության սեփականության վկայականի կազմում է 15.2555հա, նախատեսվող արևային կայանը զբաղեցնելու է 8 հա տարածք:

Նկարագրական մաս Նախատեսվում է կառուցել 5 ՄՎտ պիկային դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայան՝ Թալին համայնքի վարչական տարածքում: Կայանը տեղակայված է լինելու «Դիզափայտ» ՍՊԸ-ին պատկանող Արագածոտնի մարզի Թալին համայնքի Գայի փողոց 85 հողամասում: «Դիզափայտ» ՍՊ ընկերությունը դիտարկում է արևային էլեկտրակայանի արտադրած էներգիայի վաճառքը՝ երկարաժամկետ ժամանակահատվածում:

Տարածքի տեղական աշխարհագրական կոորդինատներն են՝
հյուսիսային լայնության 40022’04.2’’ և արևելյան երկայնության 43051’24.1’’:

Նախատեսվող գործունեության տարածքը կառուցապատված չէ, բացակայում են շենք-շինությունները, առկա է միայն պահակակետ: Գործունեության ենթակա և հարակից տարածքներում բացակայում են ճանապարհներ, էներգամատակարարման, գազամատակարարման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը, գործունեության տարածք հնարավոր է մոտենալ 300-500մ երկարությամբ գրունտային ճանապարհով, իսկ մոտ 400մ հեռավորության վրա գտնվում է Մ1 հանրապետական նշանակության ճանապարհը:

ՀՀ ԲՆՊՀ ՍԻՄՀ ՇՐՋԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
"ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT CENTER" SNCO
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Ինչպես նկարագրվում է գնահատման հաշվետվությունում տարածքն արդեն ենթարկված է անտրոպոգեն ազդեցությունների: Բացակայում են գրունտային ջրերը և քաղցրահամ ջրի աղբյուրները, իսկ մոտակա մակերևութային ջրային ռեսուրսը Մաստարա գետն է, որը նախատեսվող գործունեության տարածքից գտնվում է մոտ 7 կմ հեռավորության վրա:

Գործունեության վայրից՝ մոտ 600մ հեռավորության վրա գտնվում է մեկ այլ արևային կայան:

Ըստ հետազոտությունների արդյունքի արևային կայանի համար նախատեսվող տարածքում խոտածածկը գրեթե բացակայում է, տարածքը երկար տարիներ օգտագործվել է որպես արոտավայր և ամեն տարի գործնականում գերարածեցվել է և համաձայն իրականացված հորատումների՝ բացակայում է հողաբուսաշերտը, առկա են որոշ քարաթփային երևակումներ:

Գործունեության ենթակա և հարակից տարածքում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսական և կենդանական տեսակները բացակայում են:

Նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ Մշակութային հուշարձանների ցանկում գրանցված հնագիտական արժեքներ չկան, առկա է հնագիտական շերտ՝ դաբարանադաշտ: Ուսումնասիրության նպատակով իրականացվել են կրկնակի հնագիտական հետախուզական ուսումնասիրություններ, որի արդյունքում հայտնաբերվել է հնագույն շինություն, իսկ սեփականաշնորհված հողամասից անմիջապես արևմուտք, էլեկտրական սյան մոտ առկա է ևս մեկ դամբանաթումբ՝ կենտրոնում հստակ գծագրվող խցով և ծածկասալերով:

Նախատեսվող տարածքում բացակայում են շինարարության և կառուցվածքների վրա ազդող բնական երևույթները (սողանքներ, փլուզումներ և այլն): Ուսումնասիրությունների արդյունքում բնութագրվող տեղանքում գրունտային ջրերը մինչև 8.0մ խորություններում չեն հայտնաբերվել:

Ըստ նախագծի նախատեսվող արևային կայանը բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծին միանալու է մինչև 20մ երկարությամբ 110կՎ էլեկտրահաղորդման գծով, առանց հենասյուների՝ թռիչքային միացմամբ: Արևային ֆոտովոլտային կայանի տեղաբաշխման վայրը որոշված է հողատարածքի սեփականատիրոջ որոշմամբ, հաշվի առնելով տվյալ տարածքում արևային ճառագայթման տվյալները և ընկերության զարգացման պլանները: Կայանը տեղակայված է լինելու ծովի մակարդակից 1500մ բարձրության վրա:

Համաձայն արևային կայանի կառուցման տեխնիկական պայմանների՝ նախատեսվում է կառուցել 110կվ տրանսֆորմատորային ենթակայան: Արևային կայանը Հայաստանի էլեկտրական ցանցերին միացնելու համար նախատեսվում է կառուցել 1x6300կՎԱ հզորությամբ 110/0,8-0,8կվ լարման տրանսֆորմատորային ենթակայան: Ենթակայանի սնումն իրականացվելու է «Ախուրյան-2» 110կվ օդային գծի թիվ 243 հենարանից ներանցումով, ճյուղավորման սխեմայով դեպի ԵԿ-ի 110կվ լարման մուտքային պորտալը՝ AC-70 հաղորդալարերով: «Դիզափայտ» ԵԿ-ի 110կվ ԲԲՍ-ում նախատեսվում է տեղադրել ТМН-6300 /100 մակնիշի ուժային տրանսֆորմատոր: Տրանսֆորմատորի և 110կվ ՕԳ-ի շղթաներում տեղադրվելու են –ВВ-110 մակնիշի վակումային անջատիչ, ТФЗМ -110 մակնիշի հոսանքի տրանսֆորմատոր, -НКФ-110 մակնիշի լարման տրանսֆորմատոր, ОПН-110 արգելափակիչ գերլարումներից գծի և տրանսֆորմատորի կողմերում երկկողմանի հողանցման դանակներով Р/ІНД-2-110 մակնիշի բաժանիչներ: 110կվ սարքավորումները տեղադրվելու են հավաքովի մետաղական հենարանների վրա:

Ենթակայանի սարքավորումներն արտաքին գերլարումից պաշպանելու համար 110 և 0,8կվ ներանցիչների վրա տեղադրվելու են պարպիչներ: Այնուհետև կատարվելու է ԵԿ հողանցում:

Արևային ֆոտովոլտային կայանը կազմված է լինելու 450 հատ ՄԲՖՎՎԽ-ներից, որոնք իրենց հերթին կազմված են 26 հատ (11700 հատ) միաբյուրեղային 520Վտ, 144 (72*2)

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

կեսբջիջներով, պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) երկերես վահանակներից, որոնք տեղակայվելու են դեպի հարավ ուղղված և հորիզոնի նկատմամբ 300 անկյուն ունեցող հողային հենակառուցվածքի վրա՝ ձգման միջոցով, որը ձգվում է նախօրոք՝ այդ նպատակով կառուցված երկաթբետոնե հիմքերի վրա (0,080մ³): Նախատեսված է նաև ՖՎ վահանակների և կերպափոխիչների հողանցում: Այդ նպատակով կայանի ամբողջ տարածքում կառուցվելու է 1 ընդհանուր հողանցման ցանց (վերջինն անկախ է 110/0.8/0.8 կՎ ենթակայանի հողանցման ցանցից):

Ենթակայան. կայանը 110/0.8/0.8 կՎ 6300 կՎԱ հզորությամբ ենթակայանի միջոցով միանալու է «Ախուրյան-2» 110կՎ ՕԳ-ին: Ենթակայանը կառուցվելու է 600մ² մակերեսի վրա՝ 0,5մ խորության փոսորակում, տրանսֆորմատորի տակ կատարվելու է ռելսի և մետաղական կոնստրուկցիաների տեղադրում՝ կողապատման միջոցով, այնուհետև յուղընդունիչը ծածկվելու է մետաղական շրջանաձև ցանցով: Տրանսֆորմատորային փոսի շուրջը պատվելու է ավազե սալվածքով՝ 85մ² մակերեսով: Տեղադրվելու է նաև յուղընդունիչ՝ 8մմ հաստության, 2.5x2.5x1.5 չափսերի մետաղական (պողպատե թիթեղ) բաք և խողովակաշար՝ 70սմ տրամագծով կոյուղու չուգունե դիտանցքով:

Ենթակայանի տարածքը ցանկապատվելու է 134,4մ² մետաղական ցանցով, նախատեսվում է նաև կայանի տարածքում շուրջօրյա վերահսկողության համար օպերատորական շինության կառուցում:

Գործունեության առաջին 20 տարվա ընթացքում կայանն արտադրելու է մոտ 198.5 ԳՎտ.ժ էլեկտրաէներգիա, գործունեության իրականացումը կատարվելու է համաձայն՝ «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Կայանի ամբողջ տարածքը ցանկապատվելու է և ապահովված է լինելու լուսավորության և տեսահսկման սարքերով:

Ըստ գնահատման հաշվետվությունում նշված նկարագրի շինարարության փուլում օգտագործվելու են նաև այլ շինարարական նյութեր, որոնք մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների կոմից: Տարածքում շինանյութերի պահեստավորում չի նախատեսվում, անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և անհրաժեշտության, պահվելու են փակ ծածկով մեքենաների թափքերում և այնտեղից հանվելու են միայն օգտագործման դեպքում, տեղադրելով տակդիրների վրա: Օգտագործվելու է նաև բետոն, որը բերվելու է պատրաստի վիճակում համապատասխան մասնագիտական կազմակերպությունների բետոնախառնիչներով: Հիմքերի նախաշերտի և վերնաշերտի ամրացման նպատակով օգտագործվելու է նաև 805մ³ ծավալի ավազ և ծավալի մանրախիճ:

Նախատեսվել է գործունեության ազդեցությունները կանխարգելող կամ մեղմող միջոցառումներ, ինչպես նաև այդ միջոցառումների արդյունավետությանը վերահսկման և մոնիթորինգի ծրագիր, այդ իսկ պատճառով 110կվ և 20մ երկարության օդային գծի էլեկտրահաղորդման գծերի ուղեգիծը ընտրվել է այնպես, որպեսզի նվազագույնի հասցվի շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունը:

Կայանի կառուցման շինարարության և շահագործման փուլերում հնարավոր են շրջակա միջավայրի բաղադրիչների վրա ազդեցություններ, որոնք հետևյալն են՝

- օդային ավազանի՝ կայանի և ՕԳ շինարարական աշխատանքների ընթացքում,
- կենդանական և բուսական աշխարհի՝ կայանի և ՕԳ շինարարական աշխատանքների և շահագործման ընթացքում,
- լանդշաֆտի փոփոխություններ,
- աննշան քանակությամբ շինարարական թափոնների առաջացում,
- կայանի ապամոնտաժումից հետո առաջացող թափոններ:

Գործունեության իրականացման հետևանքով օդային ավազան լինելու են արտանետումներ ծխագազերի, ավտոտրանսպորտի և շինարարական տեխնիկայի շահագործումից, ինչպես նաև հողային աշխատանքների (փորման, բեռնման, բեռնաթափման), ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով: Կայանի շահագործման ընթացքում օդային ավազանի աղտոտման մակարդակը կարելի է գնահատել շատ ցածր, քանի որ ազդեցությունները կանխատեսվում են միայն շինարարության ընթացքում ավտոմեքենաների աշխատանքից, ինչը կրելու է կարճաժամկետ և ժամանակավոր բնույթ:

Շինարարական աշխատանքների ժամանակ աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, իսկ կենցաղային և տեխնիկական նպատակով ջուրը բերվելու է հատուկ մեքենաներով (ջրի ցիստեռ)՝ ըստ պահանջի: Ընդհանուր ջրօգտագործումը շինարարության և շահագործման փուլերում կազմելու է 2,8 մ^3/օր:

Փորման աշխատանքների արդյունքում հանվելու է որոշակի ծավալի հող/գրունտ, այդ ընթացքում առաջացող փոշու արտանետումները կրճատելու նպատակով իրականացվելու է հողի և գրունտի խոնավեցում, ինչպես նաև ըստ անհրաժեշտության (չոր եղանակներին) կատարվելու է ճանապարհի ջրցան:

Շինարարության ավարտից հետո իրականացվելու է մոդուլների մաքրում ջրով, ջրում իրականացվելու է նաև շահագործման ընթացքում՝ ոչ ավել քան տարին երկու անգամ, մաքրումը կատարվելու է բերովի ջրով՝ պայմանագրային հիմունքներով: Շինարարության փուլում տեղադրվելու է 90x90 չափերի բիոզուգարան, որի սպասարկումը շիանարարության և շահագործման փուլերում կատարվելու է մասնագիտացված ծառայությունների կողմից:

Արևային կայանի կառուցման շինարարության փուլում հողի գրունտի քանդման աշխատանքներ կատարվելու են մեխանիզմներով և ձեռքով, որի արդյունքում առաջանալու է ընդհանուր 2230,6մ^3 ծավալի հողային զանգված, որի մի մասը՝ 1474մ^3 օգտագործվելու է հետլիցքի՝ անցքերի և խրամուղիների լցման համար, իսկ մնացած՝ 756,6մ^3 հողն օգտագործվելու է տարածքների վերականգնման և բարեկարգման համար: Հողաբուսաշերտի բացակայության հանգամանքով պայմանավորված կայանի կառուցման ընթացքում հողային ռեսուրսների վրա այլ ազդեցություններ չեն գնահատվում:

Ըստ գնահատման հաշվետվության գործունեության իրականացման ընթացքում նոր ճանապարհների կառուցում և առանձին շինհրապարակ չի նախատեսվում, իսկ շինարարական աշխատանքների համար նախատեսված մեքենաները և տեխնիկան կայանվելու են հարակից գրունտային ճանապարհի եզրին և աշխատելու են հաջորդաբար՝ ըստ անհրաժեշտության, որը հնարավորություն կստեղծի խուսափելու ճանապարհների ավելորդ ծանրաբեռնվածությունից:

Շինարարության և կայանի կառուցման փուլում կառաջանան լանդշաֆտի որոշակի փոփոխություններ՝ պայմանվորված հողային աշխատանքներով, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ:

Նախատեսվող աշխատանքների ընթացքում մարդու առողջության և անվտանգության վրա անմիջական ազդեցությունը կապված է էլեկտրահարման, սանիտարական իրավիճակի և այլ գործոնների հետ, իսկ որպես պոտենցիալ վտանգ կարող է հանդիսանալ խմելու ջրի և սննդամթերքի որակի աղտոտումը: Շինարարության ամբողջ ընթացքում ապահովելու է բժշկական միջոցների բավարար քանակը, ջրի և սննդամթերքի որակի, դրանց տեղափոխման հիգիենիկ պայմաններն ու անվտանգությունը:

Շահագործման փուլում հնարավոր արտակարգ իրավիճակներ կարող է առաջանալ հրդեհային իրավիճակների, կլիմայական և այլ երևույթների (երկրաշարժ, քամի և այլն) դեպքում:

Աղմուկի և տատանումների աղբյուր կարող են հանդիսանալ ավտոտրանսպորտային միջոցները, այդ իսկ պատճառով շինարարական աշխատանքների ընթացքում ավտոմեքենաների և սարքավորումների աշխատանքից աշխատատեղերում աղմուկի մակարդակը գերազանցելու դեպքում աշխատողները կօգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ, սակայն հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ, իսկ շինարարության ընթացքում բնակավայրերին կամ առանձին բնակելի տներին, աղմուկը չի կարող հասնել, հաշվի առնելով բնակավայրերից ունեցած հեռավորությունը: Շահագործման փուլում որոշակի աղմուկի ավելացում կնկատվի ենթակայանի մոտ, որը կլինի ոչ էական:

Կայանի տեղակայման աշխատանքները տևելու են 4 ամիս՝ ըստ ժամանակացույցի:

Արևային կայանի կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, տարածքի հնարավորինս նախկին տեսքի բերում, օգտագործված ճանապարհի կարգաբերում: Կատարվելու է փոսերի, հենասյուների եզրային մասերի լիցք և հարթեցում: Գործունեության տարածքը ցանկապատվելու է՝ 1167գմ «Ռաբիցա» տեսակի մետաղական ցանցով, 350 հատ մետաղական կանգնակներով, դարպասով և դռնակով:

Կայանի կառուցման և շահագործման փուլերում պահպանվելու են մարդկանց կյանքի և առողջության ապահովման պայմանները:

Շինարարական աշխատանքների ժամանակ սպասվող արտանետումների հասցված տնտեսական վնասը գնահատվել է 1783.328 դրամ:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կատարվելու է գրունտի խոնավեցում, անհրաժեշտության դեպքում՝ ճանապարհների ջրցան, ջրցանը կատարվելու է ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին,
- գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով,
- տարածքում նյութերը պահվելու են ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ,
- շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, իրականացվելու են պարբերաբար ստուգումներ,
- հողային զանգվածը կուտակվելու է անմիջական հորատանցքերի հարևանությամբ, պահվելու է ծածկված վիճակում, այն օգտագործվելու է անմիջապես տեղում՝ հետլցման և տարածքի բարեկարգման համար,
- ճանապարհի ջրցանը և գրունտի խոնավեցումը կատարվելու է այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր,
- շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների, իսկ շինարարական տեխնիկան ժամանակավոր կայանվելու է գրունտային ճանապարհի վրա,
- շինարարական տեխնիկայի և սարքավորումների լիցքավորումը, վերանորոգումը կատարվելու է գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում,
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների մեքենաներով՝ ըստ պահանջի,
- շինարարական աշխատանքներն իրականացվելու են բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար,

- վտանգավոր նյութերի և մետաղական թափոնների կուտակում տարածքում չի նախատեսվում, թափոնները հանձնվելու են համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին՝ դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար,

շինարարական թափոնները (շինաղբ)՝ բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, մինչև աղբավայր տեղափոխելը կուտակվելու են տարածքում՝ հատուկ պարկերի կամ տարողությունների մեջ, տեղադրվելու են տակդիրների վրա՝ ծածկի տակ: Իսկ շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնվելու են թափոնների ջերմային վնասազերծում կատարող կազմակերպություններին կամ կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերակցությամբ խառնվելու և տեղափոխվելու են աղբավայր, իսկ շինարարության ժամանակ առաջացած կենցաղային աղբը ամեն օր տեղափոխվելու է Կապալառուի կողմից:

Շինարարական աշխատանքների ընթացքում ևս հնարավոր են հուշարձանների կամ հնագիտական շերտի ի հայտ գալու դեպքեր, դրանց պահպանությունն ապահովելու համար, ընկերությունն առաջնորդվելու է պատահական գտածոյի ընթացակարգով, որը ներառում է՝

• գտածոյի տեղամասում բոլոր աշխատանքների անմիջապես դադարեցում,
• տեղեկացում տեղական իշխանություններին և մշակույթի նախարարությանը,
• գտածոյի բնորոշումը պետք է իրականացվի լիազոր մարմնի պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչության կողմից,
• հայտնաբերված իրերի հետ կապված հետագա քայլերը պետք է իրականացվեն պատասխանատու մարմինների կողմից, այդ թվում դրանց տեղափոխման և պահպանման հարցը,
• հնագիտական այլ շերտի կամ որևէ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքների անմիջապես դադարեցում և տեղեկացում համապատասխան լիազոր մարմնին:

Գոյություն ունեցող դամբարանաշերտի տարածքում՝ արևային կայանի շինարարության և շահագործման փուլերում բացառվելու են.

• շինարարական աշխատանքները,
• հողային շերտի խախտումները,
• կենցաղային և շինարարական աղբի կուտակումները,
• Ձեռնարկողը, մինչև շինարարական աշխատանքների սկսելը, լիազորված մարմնի հետ կնքելու է պարտավորագիր՝ հնագիտական օբյեկտների պահպանության նպատակով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում՝ շինարարական սարքավորումներն ապամոնտաժում, մոնտաժումից հետո մետաղական մակերևույթների և շինարարական հրապարակների մաքրում: Լանդշաֆտի վերականգնում, բացառվելու է նախատեսված նախագծից դուրս կառուցապատման այլ աշխատանքները, լանդշաֆտային այլ փոփոխությունները: Շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը մաքրվելու է ավելորդ թափոններից և հնարավորինս բերվելու է նախկին տեսքին:

Գոյություն ունեցող արևային կայանի հետ որևէ գումարային ազդեցություններ չկան, իսկ տարածքում այլ արտադրություններ ևս չկան:

Շահագործման փուլում հնարավոր է թափոնների առաջացում, որոնց ազդեցությունները նվազագույնի հասցնելու համար նախատեսվում է հետևյալ միջոցառումները՝ ենթակայանի տարածքում հողային ռեսուրսների մեջ տրանսֆորմատորային յուղի արտահոսքերը կանխելու նպատակով կառուցվելու է յուղընդունիչ հոր (բաք)՝ երկաթբետոնի, խճաքարի և մետաղական էլեմենտների համակցությամբ, վթարների դեպքում յուղընդունիչում հավաքված յուղը հեռացվելու և հանձնվելու է համապատասխան վերամշակող կազմակերպություններին,

իսկ հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու է համապատասխան տարրաների մեջ և հանձնվելու է մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով: Նախատեսվում է նաև շահագործման ընթացքում առաջացած յուղոտված լաթերի և յուղային նյութեր պարունակող այլ մասերի հանձնում վերամշակող կազմակերպություններին, ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդների հանձնում ասֆալտապատող ընկերություններին և այլն:

Արևային կայանն ապահովված է լինելու հրդեհաշիջման միջոցներով՝ հակահրդեհային, ծխի և ջերմաստիճանի տվիչներով, իսկ արևային կայանում՝ կրակմարիչներով, տեսահսկման համակարգով՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ, պահակակետով, ենթակայանի շանթապաշտպանության համար պորտալների վրա տեղադրված շանթարգելներով:

Արևային կայանի կառուցման համար նախատեսվող ներդրման արժեքը կազմում է 3,5 մլն ամերիկյան դոլլար:

Արևային ֆոտոէլեկտրական կայանի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

- շինարարական նյութերի անվտանգության հսկողություն՝ շինարարական նյութերի ներկրման ընթացքում,
- շինարարական նյութերի և թափոնների տեղափոխում՝ չպլանավորված ստուգումներ օրվա բոլոր ժամերին,
- հողի աղտոտումը կանխելու նպատակով մշտադիտարկում՝ շաբաթը մեկ անգամ,
- օդի աղտոտումը կանխելու նպատակով փոշու, ծուխի մշտադիտարկում՝ ամեն օր,
- աղմուկի մակարդակի տատանումների մշտադիտարկում՝ շաբաթը մեկ անգամ,
- շինարարական և կենցաղային աղբի հեռացում տարածքից, աշխատողների անվտանգության և առողջության ստուգում, պատմամշակութային հուշարձանների մշտադիտարումներ շինարարության ընթացքում,
- տարածքի բարեկարգման աշխատանքների մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ,
- կենսաբազմազանության ապրելավայրերի և աճելավայրերի փոփոխությունների վերաբերյալ հսկողություն՝ տարին մեկ անգամ:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն համար նախատեսված են նաև հետևյալ մի շարք այլ միջոցառումներ որոնցից են՝ վթարային իրավիճակների նվազեցման օրական ստուգումներ, սոցիալական մշտադիտարկումներ՝ գործունեության ընթացքում, շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված միջոցառումների կիրառում՝ հսկողություն, համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում, բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողության իրականացում ամենօրյա ռեժիմով, բոլոր աշխատողների իրազեկում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին, տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպության կամ անձի կողմից նկատած անհամապատասխանությունների ժամանակին տեղեկացում Պատվիրատուին և/կամ նախագծային կազմակերպությանը, շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանման մշտադիտարկումներ, իրականացվելու են նաև շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառվելու նպատակով:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉԱՊԵՏԱՐԱՆ
РА ЕРЕВАН ГОРОДСКОЕ УПРАВЛЕНИЕ
RA YEREVAN CITY ADMINISTRATION

Նախատեսվում է նաև շինարարության իրականացման ժամանակացույցի և բարեկարգման աշխատանքների իրականացման ապահովում, շինարարական տեխնիկայի և տրանսպորտայինն միջոցների վառելիքի լիցքավորման և յուղման աշխատանքների կատարում շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում և այլն:

Արևային կայանի կառուցման համար նախատեսվող շրջակա միջավայրի վրա ազդեցության բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար ընդհանուր նախատեսված գումարը կազմելու է 1,5 մլն. դրամ:

Պարճառաբանական մաս. Արագածոտնի մարզի Թալին համայնքի, Գայի փողոց 85 հողամասում նախատեսվող 5 ՄՎտ հզորության արևային կայանի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներով: Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Արագածոտնի մարզի Թալին համայնքում անցկացվել են չորս հանրային քննարկումներ, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Մասնակիցների կողմից կարևորվել է նախատեսվող աշխատանքներում աշխատատեղերի ստեղծումն ու ընկերության կողմից համայնքում սոցիալական ծրագրերի իրականացումը:

Փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Առողջապահության», «Արտակարգ իրավիճակների», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի», «Պաշտպանության» նախարարություններից, «Քաղաքաշինության կոմիտեից», «Կադաստրի կոմիտեից», «Արագածոտնի մարզպետարանից», շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, տեղական ինքնակառավարման մարմիններից, որոնց կողմից ներկայացված կարծիքներն ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում:

Ամփոփելով ՇՄԱԳ հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:
2. Գործունեության իրականացման ընթացքում ապահովել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամաններով հաստատված ՀՀ-ում գործող սանիտարական կանոնների և նորմերի պահանջների կատարումը:

3. Արևային կայանի կառուցման աշխատանքներն իրականացնելիս առաջնորդվել ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրենի կողմից տրամադրած 19.12.2019թ. ի №2470-388 գրության պահանջով՝ բացառելով արևային կայանի աշխատանքների իրականացումը հնագիտական օբյեկտի տարածքներում և առաջնորդվել «Դիզափայտ» ՍՊ ընկերության և ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի օգտագործման պահպանական № 01 պարտավորագրի պայմաններով և պահանջներով:

4. Շինարարության ընթացքում և ավարտից հետո որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝

- սահմանազատել և ժամանակավոր ցանկապատել շինարարական հրապարակը, անցկացնել լուսավորություն և տեղադրել հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- վերականգնել և կրկնակի օգտագործել վթարված մասերը,
- ֆոտոէլեմենտներ պարունակող պանելները չթաղել կամ չհավաքել աղբավայրերում բաց վիճակում,
- թափոնների կուտակումը կամ պահումը իրականացնել բնակելի տարածքներից դուրս,
- վաճառել թափոնների հավաքմամբ զբաղվող այլ կազմակերպությունների՝ ներառյալ արտասահմանյան զարգացած երկրների, որոնք ունեն նման ժամկետանց արևային թափոնների վերամշակման տեխնոլոգիաներ,
- թափոնները հանձնել այն երկրների կազմակերպություններին, որոնք զբաղված են արևային պանելների արտադրությամբ և որոնցից ձեռք են բերվել ֆոտոէլեկտրոնային արևային պանելները,
- կայանի շահագործման ժամկետի սպառման դեպքում (կապար, քրոմ, կադմիում, սիլիցիում և այլ նյութեր) պարունակող ֆոտովոլտային վահանակները ժամանակավորապես պահստավորել ձեռնարկողի՝ այդ նպատակով առանձնեցված պահեստում, ինչպես նաև շահագործման ժամկետի /20 տարի/ ավարտից հետո, ժամկետանց կամ վնասված արևային ֆոտովոլտային մոդուլների, որպես վտանգավոր թափոնատեսակների տեղափոխումը, վերամշակումը, վնասազերծումը իրականացնել ձեռնարկող կամ կապալառու ընկերության միջոցներով, Թալինի համայնքապետարանի վերահսկողությամբ,
- ֆոտոէլեմենտներ պարունակող թափոնները հանձնել էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումներ հավաքող կետերին կամ կազմակերպություններին (նաև արտասահմանյան)՝ կազմակերպված թափոնների հավաքագրման նպատակով,
- շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնները հեռացնել մասնագիտական ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով և տարածքում բացառել թափոնների բաց այրումը,
- ապահովել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը,
- շահագործումի ավարտից հետո կատարել հողի և լանդշաֆտի վերականգնողական միջոցառումներ,
- իրականացնել նախատեսվող սոցիալական ծրագրերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Արագածոտնի մարզի, Թալին համայնքի Գայի փողոց 85 հողամասում նախատեսվող 5 ՄՎտ հզորության արևային կայանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա

ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն»
ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Ն. Նասիբյան

Ընդամենը՝ 10 էջ